



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

№ ԱԽ-5-Ո-5  
2018թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ  
ԱՐԹՈՒՐ ՌԱԴԻԿԻ ՕՀԱՆՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ  
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝**

*նախագահությամբ՝*

*Ա. Մկրտումյանի*

*մասնակցությամբ ԱԽ անդամներ՝*

*Ա. Բաբայանի, Գ. Բաղիրյանի,  
Ռ. Բարսեղյանի, Գ. Խանդանյանի,  
Ա. Խաչատրյանի, Մ. Հարթենյանի,  
Գ. Ղազինյանի, Ս. Չիչոյանի,  
Ե. Սողոմոնյանի, Վ. Ստեփանյանի,  
Հ. Փանոսյանի, Ս. Օհանյանի*

*քարտուղարությամբ՝*

*Գ. Նիկողոսյանի*

2018 թվականի մարտի 12-ին քաղաք Երևանում՝ Արդարադատության խորհրդի նիստում, քննարկելով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արթուր Ռադիկի Օհանյանի լիազորությունները՝ նշանակումից հետո դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող հիվանդություն ձեռք բերելու կապակցությամբ, դադարեցնելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահի միջնորդությունը և ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 95-րդ հոդվածի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 21-ի դատական օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 1184-Ն որոշմամբ

**Ո Ր Ո Շ Ե Ց**

Առաջարկել Հայաստանի Հանրապետության Նախագահին՝ դադարեցնել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արթուր Ռադիկի Օհանյանի լիազորությունները՝ նշանակումից հետո դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող հիվանդություն ձեռք բերելու կապակցությամբ: